ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-1-16/02» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 29 ապրիլի 2016թ.

Սույն թվականի ապրիլի 29-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-1-16/02» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Լ. Գ. Սիրունյանը, Տ. Հ. Զաքոյանը, Ս. Պ. Կարապետյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրար է ներկայացել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ, (ք. Երևան, Պուշկինի 1) կազմակերպությունը:

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 67 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում:
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին:
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին:
   - գնի առաջարկ՝ բոլոր 3 չափաբաժինների համար:
   - հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
   - հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ

Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ ինը էջից:

Գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբա-ժինը	Գնման առարկայի անվանումը	«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
1	Բենզին պրեմիում, կտրոններով	510.000 /հինգ հարյուր տասը հազար դրամ/
2	Բենզին ռեգուլյար, կտրոններով	82.500 /ութսուներկու հազար հինգ հարյուր դրամ/
3	Դիզելային վառելիք /ամառային/, կտրոններով	626.000 /վեց հարյուր քսանվեց հազար դրամ/

2) Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի և 30-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:
- ✓ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին առաջարկել հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Անգործության ժամկետ չի սահմանվում:
- ✓ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և դրական եզրակացություն ստանալու դեպքում պայմանագիր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ➢ Ընթացակարգի մասնակցին տեղեկացնել որոշման մասին և «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<դ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը՝ այն է, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց հետո:

հանձանաժողովի նախագահ՝ Ն. Ա. Կուտուզյան

հանձանաժողովի անդամ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձանաժողովի անդամ՝ Տ. Հ. Զաքոյան

հանձանաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձանաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան